

1. Ձեզ համար անցանկալի և անկանխատեսելի դեպքերի հետևանքով առաջացող մեծ ծախսերից ազատվելու միջոց:
2. (Ուղղահայաց) Հնարավորություն է տալիս կուտակել խնայողությունները և ստանալ եկամուտ ներդրված գումարի դիմաց:
3. Եթե բանկում ունեք միայն դրամային ավանդ, ապա երաշխավորվում է մլն ՀՀ դրամի չափով:
4. Ապահովագրական պայմանագրով սահմանված չափով և պայմաններով ապահովադրի կողմից ապահովագրողին վճարվելիք գումարն է:
5. Արժեթուղթ, որը հավաստում է դրա տիրոջ բաժնետիրական ընկերության շահույթից շահաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքային մաս ստանալու իրավունքը:
6. Բանկերի և վարկային կազմակերպությունների հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ է, որտեղ կուտակվում, մշակվում և օգտագործողներին է տրամադրվում տեղեկատվություն վարկառուների և նրանց տրամադրված վարկերի վերաբերյալ:
7. Դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու դեպքում ապահովագրողը պարտավորվում է Ձեզ կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում:
8. Սովորաբար 3 տարի և ավել մարման ժամկետով վարկերը անվանում են վարկեր:
9. Ապահովագրական ընկերության հետ ապահովագրական պայմանագիր կնքող անձ:
10. Ապահովագրական միջնորդ, որը օժանդակում է ապահովագրողների և ապահովադիրների միջև ապահովագրական հարաբերությունների հաստատմանը:
11. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրո:
12. (Ուղղահայաց) Ֆինանսական համակարգի հաշտարարը քննում է այն բողոքները, որոնք պարունակում են մինչև 10 դրամի գույքային պահանջ:
13. դիմելու դեպքում Ձեր և կազմակերպության միջև ծագած վեճը լուծում է դատարանը:

